# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՐ-Մեդիկա ՍՊԸ-ն ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 34 | HAR23 HARMONIC ACE®+ | Johnnson &Johnson, Ethicon Endo | Հարմոնիկ ուլտրաձայնային ծայրադիր 5 մմ 23 սմ ատրճանակատիպ: Մկրատ կոագուլյացիոն ուլտրաձայնային էրգոնոմիկ ատրճանակաձեվ բռնակով, բաց և էնդոսկոպիկ վիրահատությունների համար, ձեռքի ակտիվացման հնարավորությամբ:Նախատեսված է մինչև 5 մմ ներառյալ անոթների և հյուսվածքների միաժամանակյա հատելու և կոագուլացնելու համար:Ակտիվացման բացակայության դեպքում կարող է կիրառվել որպես գրասպեր և դիսեկտոր:Մկրատի տիտանային սայրի երկայնական տատանման հաճախությունը կազմում է 55,5 կՀց:Մկրատը կարելի է ակտիվացնել ձեռքի կառավարման (MIN) և (MAX) կոճակների միջոցով, որոնք տեղակայված են մկրատի բռնակի մարմնի առաջային մակերեսին /արագ հասանելիության համար/ կամ ոտքի առբերիչի միջոցով: MIN ակտիվացման կոճակը տեղակայված է մկրատի բռնակի մարմնի ներքևի մասում, MAX կոճակը տեղակայված է մկրատի բռնակի մարմնի վերևի մասում , անմիջապես ցողունի պտույտի օղի մոտ: Կոճակների ընդհանուր քանակը կազմում է 2 հատ:Բռնակի մարմինը ունի բրանշերի ամբողջական |

| | | | |
|---|---|---|---|
| | | | առբերման ներկառուցված տակտիլ և ձայնային ինդիկացիայի մեխանիզմ: Առկա է հյուսվածքների ադապտացիայի տեխնոլոգիա գեներատորի հետ հետադարձ կապի և ծայրադիրի ակտիվ սայրի ջերմաստիճանի վերահսկում G11 գեներատորի միջոցով, որի շնորհիվ հնարավոր է լինում աշխատանքի ընթացքում ճանաչել ծայրադիրը , վերահսկել նրա աշխատանքը ելքային հզորության մոդուլյացիայի և նրա նվազեցման հաշվին, որի արդյունքում ավելանում է սարքի աշխատանքի էֆֆեկտիվությունը և արագությունը, ինչպես նաև նվազում է հյուսվածքների կողմնային ջերմային վնասումը:Առկա է ակտիվ սայրի ջերմաստիճանի բարձրացման լրացուցիչ ձայնային ազդանշան որը հնարավորություն է տալիս ավելի կատարյալ վերահսկել հեմոստազի որակը:Ցողունը ունի հատուկ հակափայլատակման ծածկույթ:Ցողունի երկարությունը 23 սմ, ակտիվ սայրի ծայրից մինչև պտտման օղը:Գործիքի ընդհանուր երկարությունը - 34,2 սմ:Սայրի մաքսիմալ ամպլիտուդան կազմում է 85,9 մկմ:Ցողունի տրամագիծը կազմում է 5 մմ:Ցողունի պտույտը կազմում է 360° որն իրականացվում է պտույտի օղի միջոցով, որը տեղակայված է ցողունի և բռնակի միացման մասում (ապահովում է արագ հասանելիություն մեկ ձեռքի միջոցով) -հեշտացնելով գործիքի և վիրահատվող հյուսվածքների տեսանելիությունը:Պասիվ բրանշի վրա երկու կողմնային մակերեսներին առկա են 5 մմ երկարության ինդիկատորներ:Առկա է ակոսավոր մուտք լապարասկոպիկ բռնակին միանալու համար:Բրանշերի առբերման ատրճանակձև բռնակ:Բրանշերի առբերման բռնակի վրա ներքին մակերեսին, ձեռքի ակտիվացման կոճակների և պտտման օղի վրա առկա են ռետինե ներդիրներ որոնք կանխում են վիրաբույժի ձեռքերի սահումը և նպաստում են նրա ձեռքերի հարմարավետ տեղակայմանը:Աշխատանքային մասը բաղկացած է ակտիվ (սայր) և պասիվ բրանշերից:Ակտիվ բրանշը տիտանային է հյուսվածքների սոսնձումը կանխող հատուկ ծածկույթով, կոր է սև որի շնորհիվ նվազեցվել է փայլատակումը և ավելացվել աշխատանքային տարածքի տեսանելիությունը,կտրվածքի վրա ունի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | վեցանկյուն տեսք։Ակտիվ բրանշի ուռուցիկ և գոգավոր մակերեսները ինչպես նաև պրոքսիմալ մասը հիմնականում նախատեսված են հյուսվածքների կոագուլյացիայի համար։ Սուր վերին և ստորին եզրերը, ինչպես նաև ակտիվ բրանշի դիստալ հատվածը /ծայրը/ նախատեսված են հյուսվածքները հատելու համար։Պասիվ բրանշը ունի պլաստիկ ակոսավոր վրադիր հյուսվածքների հետ արդյունավետ աշխատելու համար։Ակտիվ բրանշի երկարությունը կազմում է 15 մմ։Պասիվ բրանշի լայնությունը կազմում է 2,67 մմ։Բրանշերի բացվածքը կազմում է 11,35 մմ։Սեղմող բրանշի շեղման մաքսիմալ անկյունը կազմում է 22°։Մատակարարվում է աշխատանքային մասի շարժական գորշ բանալիով։Նախատեսված է մեկ հիվանդի մոտ օգտագործման համար, ենթակա չէ կրկնակի ստերիլիզացիայի։Մատակարարվում է ստերիլ , կարող է կիրառվել կարդիոստիմուլյատորով հիվանդների մոտ։Համատեղելի է GEN11 գեներատորի հետ «հարմոնիկ» ծայրադիրների համար նախատեսված հատուկ փոխարկիչի միջոցով։Մատակարարը պետք է տրամադրի GEN11-ի արտադրող /Ջոնսոն եվ Ջոնսոն կորպորացիա/-ի կողմից պաշտոնական նամակ, որով կհաստատի, որ իր ներկայացված ծայրադիրները համատեղելի են GEN11 գեներատորի հետ և կիրառման դեպքում անվնաս են սարքի , բուժ անձնակազմի եվ հիվանդի համար |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Ар-Медика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՈՒԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/33 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 34 | - | - | - |